ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ԱՐԱ ԵՐԵՄՅԱՆ

Քրեական դատավարության ամեն փուլում պատասխանատվության անխուսափելիության լենինյան սկզբունքն ապահովվում է դատավարական, քննչական գործողությունների տարբեր ծավալով և օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատուկ միջոցներով։ Կատարված և նախապատրաստվող հանցագործությունների համար պատասխանատվության անխուսափելիությունն ամենից առաջ ապահովվում է՝ քրեական գործի հարուցման մասին օրինական և հիմնավորված որոշում կայացնելով։

Քրեական գործի հարուցումն անհիմն մերժելու յուրաքանչյուր դեպք հանցագործության դեմ մղվող պայքարի կազմակերպման գործում բացասական հետևանքներ է ունենում։ Դա վատ ազդեցություն է թողնում անկայուն անձանց վարքագծի վրա, որոնց մոտ անպատժելիության պատրանք է առաջանում։ Այն կործանարար է երիտասարդության և հատկապես անչափահասների հոգեբանության ձևավորման համար. օրինականության վերաբերյալ սխալ պատկերացում է ստեղծվում, նախադրյալներ են առաջանում ավելի ծանր հանցագործություններ կատարելու համար։ Հարկավոր է նկատի ունենալ նաև, որ այդ հանգամանքը կոպիտ խախտում է պետական, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը։ Անվիճելի է, որ եթե քրեական գործի հարուցումն անհիմն և ապօրինի մերժելու փաստերը ժամանակին չեն կանխվում և դա վերածվում է պրակտիկայի, ապա ստեղծված վիճակը սասանում է ոչ միայն իրավապահական մարմինների հեղինակությունը և քաղաքացիների մոտ կասկածանք է առաջանում նրանց օբյեկտիվության ու կարողությունների վերաբերյալ, այլև հետաքննության մարմինների, քննիչների, դատախազների ու դատավորների մոտ անպատասխանատվության, անպատժելիության զգացում է ծնում քրեական գործի հարուցման հիմքերը թերի ստուգելու և քրեական դատավարության այդ փուլում թույլ տրված այլ սխալների նկատմամբ։ Այսպես, ՍՍՀՄ Գլխավոր դատախազի ցուցումով Գոմել քաղաքում իրավախախտումների դեմ մղվող պայքարի վիճակի ստուգմամբ պարզվել են «քրեական գործի հարուցումն անհիմն ու ապօրինի մերժելու և քրեական գործի կարճման ոչ քիչ փաստեր։ Բացահայտվել են նաև հանցագործությունները գրանցումից թաքցնելու փաստեր, որ, անշուշտ, բացասաբար էին ազդում հանցագործությունների դեմ մղվող պայքարի վրա»[1]։

Այդ պատճառով էլ հանցագործությունների վերաբերյալ դիմումներին, հայտարարություններին ընթացք տալու գործում հարկավոր է ապահովել դատախազի մշտական, կանոնավոր և պահանջկոտ հսկողությունը։ Հանցագործությունների վերաբերյալ ստացված սկզբնական տեղեկությունների օրինական և հիմնավորված լուծումն ապահովելու նպատակով դատախազը պետք է ամենայն պահանջկոտությամբ ստուգի ձեռք բերված նյութերի որակը։ Մասնավորապես պետք է պարզի. ստացվե՞լ են արդյոք անհրաժեշտ բացատրություններ և պահանջվե՞լ են անհրաժեշտ նյութեր դիմումում կամ հայտարարությունում նշված հանցանքի մասին, արդյոք հակասություններ չկա՞ն սկզբնական նյութերում, անհրաժեշտություն չկա՞ օպերատիվ հետախուզական աշ-

---

[1] Г. Негода, Основная задача проверки—принятие мер и оказание помощи на месте («Социалистическая законность», 1985, № 1, с. 29).

խատանք կատարելու, ճի՞շտ է կիրառվել օրենքը։ Քրեական գործի անհիմն մերժում հայտնաբերելու դեպքում «դատախազը վերացնում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, քրեական գործ է հարուցում և նյութերն ուղարկում է հետաքննություն կամ նախաքննություն կատարելու»[2]։ Այսպես, օրինակ, քաղաքացի Խ-ի անձնական սեփականության իրավունքով պատկանող «Մոսկվիչ-412» մակնիշի ավտոմեքենան փախցնելու փաստով Երևան քաղաքի Սովետականի շրջանի ՆԳ բաժինը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում է կայացրել այն պատճառաբանությամբ, որ միլիցիայի աշխատակիցներ Կ-ն և Ա-ն տեսել են մեքենան փախցնողներին՝ 10—12 տարեկան երեխաների, որոնք դեռևս քրեական իրավունքի սուբյեկտ չեն։ Քրեական գործի հարուցումը մերժելու նման պատճառաբանությունը չի բխում օրենքի պահանջներից։ Ուստի, դատախազը մերժման որոշումը վերացրել է և քրեական գործ է հարուցել ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 180 հոդվածով։

Պրակտիկայում հաճախ դատախազը վերացնում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին կայացված որոշումը և նյութերն ուղարկում է հետաքննության մարմնին կամ քննիչին լրացուցիչ ստուգում կատարելու համար։ Դատախազը միաժամանակ նշում է սկզբնական նյութի նախնական ստուգման ընթացքում թույլ տրված թերությունները և բացթողումները, հանձնարարում է ստուգել ու ճշտել որոշ հանգամանքներ, ելնելով քրեական դատավարական օրենսգրքի պահանջներից, ժամկետ է սահմանում լրացուցիչ ստուգումն անցկացնելու համար։

Քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման օրինականության ստուգման ընթացքում, երբ պարզվում է, որ այն կայացվել է անբավարար ստուգված նյութերով, որոշ իրավաբանների կարծիքով, լրացուցիչ ստուգումներ անցկացնելու պրակտիկան ինքնըստինքյան հասկանալի երևույթ է[3]։ Կան նաև հեղինակներ, որոնք գտնում են, որ նման դեպքերում դատախազին պետք է վերապահվի ստուգման ժամկետը երկարացնելու իրավունք[4]։ Վերոհիշյալ տեսակետների խոր վերլուծությունն չկատարելով՝ նշենք միայն, որ լիովին կիսում ենք Ս. Սամոյլովի կարծիքն այն մասին, որ լրացուցիչ ստուգում անցկացնելը օրենքի վրա չհիմնված և հակասական պրակտիկա է[5]։ Այդպիսին է նաև ՍՍՀՄ Դատախազության և ՆԳՄ դիրքորոշումը[6]։ ՍՍՀՄ Դատախազությունում և ՆԳՄ-ում հաշվետվության ձև է մտցված, որտեղ նախատեսված է քրեական գործի հարուցումը մերժելու մասին կայացված որոշումը վերացնելու հետ միաժամանակ քրեական գործ հարուցել։ Այս հարցի հետազոտությունը պահանջում է հաշվի առնել այն հայտնի դրույթը, որի համաձայն այն ժամկետը, որը տևում է հանցանք կատարելու պահից մինչև քրեական գործի հարուցումը, պետք է հնարավորին չափով կրճատվի։ Այդպիսով, ճիշտ է դրվում հանցագործության մասին դիմումների ու հայտարարությունների արագ ստուգման հարցը և քաշքշուկը վերացնելու պահանջը։

---

[2] Л. А. Быков, Н. В. Маслов, В. И. Ремнев, Законность возбуждения уголовного дела, М., 1967, с. 41.

[3] Տե՛ս М. Ю. Рагинский, В. П. Рябцев, Н. С. Трубин, Прокурорский надзор за соблюдением требований закона при учете и разрешении заявлений и сообщений о преступлениях, М., 1977, с. 66, 67; М. А. Ковалев, Прокурорский надзор за обеспечением прав личности при расследовании преступлений, М., 1981, с. 109 и др.

[4] Տե՛ս В. В. Степанов, Предварительная проверка первичных материалов о преступлениях, Саратов, 1972, с. 125; В. Афанасьев, А. Чувилев, Ю. Белозеров, Незаконные отказы в возбуждении уголовного дела («Социалистическая законность» 1971, № 7, с. 29) и др. Պետք է նշել, որ այս հեղինակներն առաջարկում են հարկ եղած դեպքերում տարբեր ժամկետներով երկարացնել նախնական ստուգումը։

[5] С. Самойлов, Законность отмены решений об отказе в возбуждении уголовного дела («Социалистическая законность», 1982, № 4, с. 65).

[6] Նույն տեղում, էջ 65։

ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 112 հոդվածի 3-րդ մասի համաձայն քննիչը կամ հետաքննության մարմինը քրեական գործի հարուցման որոշման պատճենն անհապաղ ուղարկում է դատախազին։ Ճիշտ կլիներ համապատասխան լրացումներ մտցնել ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքում, որտեղ այդ մասին ոչինչ ասված չէ։

Օրենսդրությամբ նախատեսված չէ նաև հետաքննության մարմնի և քննիչի պարտականությունը՝ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում այդ մասին դատախազին անհապաղ տեղյակ պահելու վերաբերյալ։ Վ. Սավիցկին նշում է, որ գործի հարուցման մերժումը ենթադրում է դատախազի հսկողական լիազորությունների միայն միանգամվա օգտագործում, և այդ պատճառով մերժման մասին դատախազին տեղեկացնելը խիստ անհրաժեշտ է դառնում[7]։ Գրականության մեջ միանգամայն ճիշտ է նշվում[8], որ «նպատակահարմար է թվում այնպիսի կարգի սահմանումը, որի համաձայն քննիչը և հետաքննության մարմինները պարտավոր են դատախազին անհապաղ ուղարկել գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը»[9]։ Այդ կապակցությամբ նպատակահարմար է համապատասխան լրացումներ մտցնել ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 104 հոդվածում։

Պրակտիկայում, որպես կանոն, մեկ-երկու օրվա ընթացքում դատախազին է ուղարկվում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը։ Դատախազը ստուգում է կայացված որոշման օրինականությունը և իր որոշմամբ հաստատում կամ վերացնում է այն։ Քրեական դատավարության օրենսգրքի պահանջների կոպիտ խախտումներ կամ հանցագործությունների մասին սկզբնական նյութերի նախնական ստուգման ընթացքում լուրջ թերություններ հայտնաբերելու դեպքում դատախազը համապատասխան մարմնին միջնորդագիր է ներկայացնում՝ նշելով օրինականության խախտումները, աշխատանքում տեղ գտած այլ թերությունները և պահանջում է բարելավել ստուգման որակը։ Դատախազը միաժամանակ պարզում է օրինականության խախտման պատճառները, բարձրացնում մեղավոր պաշտոնատար անձի պատասխանատվության հարցը։ Նա նաև հսկում է, որ իր պահանջները կատարվեն ամենակարճ ժամկետներում և ձեռնարկված միջոցառումների մասին տեղյակ պահեն իրեն։ Դա նպաստում է պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվող օրինականության խախտումների կանխմանը։ Այսպես, անորոշ ժամանակով արգելված արհեստով զբաղվելու փաստով Մյասնիկյանի շրջանի ՆԳ բաժնի խիստ թերի նախապատրաստած նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին անհիմն կայացրած որոշումը վերացրել է շրջանի դատախազը։ Նշված փաստով վեր են հանվել նյութերի նախապատրաստման ընթացքում տեղ գտած թերությունները, տրվել են կոնկրետ հանձնարարություններ և ՆԳ բաժնին հասցեագրված միջնորդագրում նշվել է, որ տեսուչը ստուգման ընթացքում ցուցաբերել է օպերատիվ աշխատողի ցածր մակարդակ և այդ պատճառով քաղաքացի Ա-ն խուսափել է քրեական պատասխանատվությունից, իսկ նրա հանցակիցները ժամանակին չեն բացահայտվել։ Շրջանի դատախազը նշել է, որ այդ հարցը հարկավոր է քննարկել օպերատիվ խորհրդակցությունում և համապատասխան միջոցներ ձեռնարկել օպերատիվ անձնակազմի պատասխանատվության բարձրացման ուղղությամբ՝ քննարկման արդյունքների մասին իրեն հայտնելով։

---

[7] В. М. Савицкий, Очерк теории прокурорского надзора, М., 1975, с. 125.

[8] Н. С. Алексеев, В. З. Лукашевич, Ленинские идеи в советском уголовном судопроизводстве (возбуждение уголовного дела и предварительное расследование, Л., 1970, с. 48; Р. М. Готлиб, Прокурорский надзор за исполнением законов при производстве дознания органами милиции (Автореферат канд. днсс., Л., 1970, с. 8); В. М. Савицкий, *նշվ. աշխ., էջ 125։*

[9] В. В. Степанов, *նշվ. աշխ., էջ 121։*

Քրեական գործի հարուցման փուլում պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելու պայմաններից մեկը հանցագործության փաստի առթիվ քրեական գործի հարուցումն է։ Իրավաբանական գրականության մեջ քննարկման նյութ է այն հարցը, թե կարելի՞ է արդյոք քրեական գործ հարուցել կոնկրետ անձի նկատմամբ (ինչպես հաճախ ձևակերպվում են այդ որոշումները)։ Այսպես, Ա. Միխայլենկոն գտնում է. «Եթե քրեական գործի հարուցման փուլում հայտնի է հանցագործություն կատարած անձը, կա կասկածյալ, ապա քրեական գործը պետք է հարուցվի ոչ միայն կատարված հանցանքի փաստով, այլև կոնկրետ անձի նկատմամբ»[10]։ Մ. Ռագինսկին նշում է, որ քրեական գործերը կարող են հարուցվել «միայն հանցանքի փաստի կապակցությամբ, քանի որ սովորաբար քրեական պատասխանատվության ենթակա անձն անհայտ է գործի հարուցման պահին։ Սակայն այնպիսի հանցագործությունների փաստերով, ինչպիսիք են փախուստը, դասալքությունը և այլն, քրեական գործը կարող է հարուցվել նաև որոշակի անձի դեմ, բայց միայն այն դեպքում, երբ նրա գործողություններում հանցանշաններ են դիտվում»[11]։

Քրեական գործի հարուցումը կոնկրետ անձի դեմ նախատեսված է ընդհանուր զինապարտության մասին ՍՍՀՄ օրենքի 98 հոդվածով, ՀՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 5[6] հոդվածի 3-րդ մասով և 247 հոդվածով, ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և 256 հոդվածով, ՈՒՍՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 277 և 279 հոդվածներով և այլն։ Որոշ հեղինակներ[12] վիճարկում են այն գրույթը, որն «արդարացնում է կոնկրետ անձի դեմ քրեական գործի հարուցումը»[13]։ Մ. Կովալյովի տվյալներով կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործի հարուցման պրակտիկան տարածված է հատկապես խուլիգանության գործերում։ «Խուլիգանության փաստի առթիվ Մոսկվա քաղաքի Հոկտեմբերյան և Պերովյան շրջանների միլիցիայի աշխատողների հարուցած գործերի մոտավորապես 50 տոկոսը նշումներ են պարունակում, խուլիգանական գործողություններ կատարող անձի մասին»[14]։ Այդ պրակտիկան, որի նպատակն է մեղավոր անձին հնարավոր չափով արագ քրեական պատասխանատվության ենթարկելը; ունի նաև իր բացասական կողմերը։ Հաճախ կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործի հարուցման դեպքում միակողմանի քննություն է կատարվում, լրիվ չեն պարզ-

---

10 А. Р. Михайленко, Возбуждение уголовного дела в советском уголовном процессе, Саратов, 1975, с. 136.

11 Տե՛ս «Научно-практический комментарий УПК РСФСР», издание 3-е. под ред. Л. Н. Смирнова, М., 1970, с. 161; «Комментарий к уголовно-процессуальному кодексу РСФСР», под ред. А. М. Рекункова и А. К. Орлова, М., 1981, с. 151, п. 17.

12 М. С. Строгович, Курс советского уголовного процесса, т. 1, М., 1968, с. 276, т. 2, М., 1970, с. 12; «Уголовный процесс», под ред. М. А. Чельцова, М., 1969, с. 183; Н. В. Жогин, Ф. Н. Фаткулин, Возбуждение уголовного дела в советском уголовном процессе, М., 1961, с. 180—183; Г. Ясинский, Надзор прокурора за законностью возбуждения уголовных дел («Социалистическая законность», 1965, № 6, с. 54; М. А. Ковалев, նշվ. աշխ., էջ 100· նույնի՝ Процессуальные вопросы прокурорского надзора в стадии возбуждения уголовного дела (Автореферат канд. дисс., М., 1974, с. 13—14 и др.).

13 В. П. Борисов, Расследование квартирных краж (Автореферат канд. дисс., Душанбе, 1970, с. 110). Այն հարցը, թե ի՞նչ պետք է գրել քրեական գործի հարուցման մասին կայացված որոշման մեջ՝ գործը հարուցել անձի դե՞մ, թե՞ փաստի առթիվ, Մ. Բրայնինը համարում է սխոլաստիկ և նշանակություն չունեցող (տե՛ս М. Брайнин, Рецензия на кн.: Р. Д. Рахунов, Возбуждение уголовного дела в советском уголовном процессе, М., 1954; «Социалистическая законность», 1955, № 11, с. 79, 80). Սակայն այդ կարծիքի հետ չի կարելի համաձայնել։

14 М. А. Ковалев, Прокурорский надзор за обеспечением прав личности при расследовании преступлений, с. 100.

վում գործի բոլոր հանգամանքները և հետաքննության մարմնի, քննիչի ու դատախազի ուշադրությունից վրիպում են հանցակիցները։ Նման դեպքերում հանցագործության կազմակերպիչների, դրդիչների և օժանդակողների համար պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն է առաջանում։

Իհարկե, կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը միակողմանի և ոչ լրիվ քննության անմիջական նախադրյալ չէ, սակայն իր մեջ պարունակում է այդ հնարավորությունը և լրիվ չի ապահովում բոլոր մեղավորներին պատժելու անխուսափելիությունը։ Միանգամայն ճիշտ են այն հեղինակները, որոնք նշում են, որ «անձը մեղադրյալի վիճակի մեջ է դրվում ոչ թե քրեական գործի հարուցման ակտով, այլ նրան, որպես մեղադրյալի, պատասխանատվության ենթարկելու մասին կայացված ակտով (ինչպես նաև անձը կասկածյալի վիճակի մեջ է դրվում ՌՍՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 52 հոդվածի համաձայն նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց կիրառելու հետևանքով)»[15]։ Նույն դրվածքն է սահմանված միութենական բոլոր հանրապետությունների քրեական դատավարական օրենսդրությամբ։

Քրեական գործի հարուցման ակտում կոնկրետ անձին մատնացույց անելը իրավաբանորեն և փաստացի կապում է տվյալ անձը գործի հետ։ Միանգամայն ճիշտ է նշել Ա. Կոնին, որ «քրեական հետապնդումը բավականին լուրջ երևույթ է և այդ պատճառով չի կարող ամենամանրակրկիտ կշռադատվելու անհրաժեշտություն չառաջացնել։ Ո՞չ դատարանի միջոցով և ո՞չ էլ անգամ մինչ դատի տալը գործի կարճումը հաճախ չեն կարող հարթել նյութական և բարոյական այն վնասը, որը հասցվել է մարդուն՝ նրան շտապողաբար և անհիմն կապելով քրեական գործին»[16]։ Դա բարոյական, հոգեբանական, սոցիալ-քաղաքական և իրավաբանական ճնշում է գործադրում այն անձի վրա, որն օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել ո՞չ կասկածյալ և ո՞չ էլ մեղադրյալ։ Դա չի նպաստում գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը՝ սկսած գործի հարուցման պահից, և ոտնահարում է անձի իրավունքներն ու օրինական շահերը։

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ նպատակահարմար է ՀՍՍՀ քրեական դատավարական օրենսգրքի 5[6] հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ։ Մասնավորապես կարելի է շարադրել. «Չի թույլատրվում երաշխավորության հանձնել և այդ հիմքերով գործը կարճել կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որը նախկինում դատապարտված է եղել դիտավորյալ հանցագործության համար կամ արդեն հանձնված է եղել երաշխավորության»։ «Այն անձի նկատմամբ» բառերը «կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ» բառերով փոխարինելը ավելի ճիշտ կարտահայտի օրենքով նախատեսված կարգով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ սահմանված արգելքի էությունը։

Նշված ընդհանուր կանոնը չի տարածվում մասնավոր մեղադրանքի գործերի վրա, երբ «գործի հարուցումն ու դատի տալը կատարվում են միաժամանակ և ձևակերպվում են մեկ դատավարական փաստաթղթով»[17]։ Քանի որ «այդպիսի գործերով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին հատուկ ակտ չի կազմվում, մեղադրանքը ձևակերպվում է անմիջապես քրեական գործի հարուցման մասին որոշման մեջ...»[18]։

Հարկավոր է նշել, որ նոր անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը ՀՍՍՀ քրեական դատավարական օրենսգրքի 247 հոդվածի համաձայն արմա-

---

15 Նույն տեղում, էջ 100—101։ Տե՛ս նաև Н. В. Жогин, Ф. Н. Фаткулин, նշվ. աշխ., էջ 151—152։

16 А. Ф. Кони, Избранные произведения. Воспоминания, т. 2, М., 1959, с. 401.

17 «Комментарий к УПК РСФСР», М., 1981, с. 151, п. 20.

18 Н. В. Жогин, Ф. Н. Фаткулин, նշվ. աշխ., էջ 182։

տապես տարբերվում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի հարուցած գործերից, և նշված կարգը պրակտիկայում իրեն լիովին արդարացնում է[19]։ Դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր անձի նկատմամբ, մինչև գործի հարուցումը, դատարանը ոչ թե անցկացնում է քրեական գործի հարուցման հիմքերի առկայության նախնական ստուգում, այլ դատական քննության ժամանակ, պահպանելով ՀՍՍՀ քրեական դատավարական օրենսգրքի 236 և 237 հոդվածների պահանջները, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն կատարելու միջոցով ստույգ պարզում է այն պայմանները, որոնք ուղղակիորեն մատնացույց են անում քրեական պատասխանատվության չենթարկված, սակայն հանցանք կատարած անձին։ Այդ դեպքերում դատարանը քննության է առնում նոր անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու հարցը, որոշում է կայացնում և ՀՍՍՀ քրեական դատավարական օրենսգրքի 247 հոդվածի համաձայն անհրաժեշտ նյութերը ուղարկում է հետաքննություն կամ նախաքննություն կատարելու։ Նոր անձի նկատմամբ քրեական գործի հարուցման սահմանված կարգը չի հակասում այն դեմոկրատական սկզբունքներին, որոնց վրա հիմնված են քրեադատավարական իրավահարաբերությունները։

ОБЕСПЕЧЕНИЕ НЕОТВРАТИМОСТИ НАКАЗАНИЯ В СТАДИИ ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА

АРА ЕРЕМЯН

Резюме

Неотвратимость наказания за совершенные и подготовляемые преступления обеспечивается, в первую очередь, вынесением законного и обоснованного постановления о возбуждении уголовного дела. Каждый случай вынесения незаконного постановления о возбуждении или об отказе в возбуждении уголовного дела негативно отражается на организации борьбы с преступностью. При этом практика производства дополнительной проверки после вынесения постановления об отказе в возбуждении уголовного дела не основана на законе. Возбуждение уголовного дела в отношении конкретного лица юридически и фактически связывает данное лицо с уголовным делом, не способствуя при этом всестороннему, полному и объективному исследованию обстоятельств дела уже с момента его возбуждения. Вышеуказанное положение не распространяется на возбуждение уголовных дел по делам частного обвинения и в порядке ст. 247 УПК Армянской ССР.

Правовое обеспечение законности и обоснованности возбуждения и отказа в возбуждении уголовного дела нуждается в дальнейшей разработке.

---

19 Դատարանի կողմից հանցանքին մասնակից բոլոր անձանց բացահայտելու և հայտնաբերված փաստով նոր անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու միջոցով նրանց պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության մասին տե՛ս С. А. Шлыков, Л. С. Симкин, Судебная практика по делам об обмане покупателей и заказчиков («Комментарий судебной практики за 1982 год», под. ред. Е. В. Болдырева, А. И. Пергамент, М., 1983, с. 111). Նոր անձի նկատմամբ քրեական գործի հարուցման հնարավորության մասին նշում է Վ. Սավիցկին, գրական պատասխանելով այն հարցին, թե «կարո՞ղ է արդյոք դատարանը քրեական գործ հարուցել անձի նկատմամբ, որի մասին գոյություն ունի դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կայացրած և չվերացրած որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին նույն փաստերով» (տե՛ս В. М. Савицкий, նշվ. աշխ., էջ 121)։